

# ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՃԳՆԱԺԱՍԵՐԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

## *Միխայիլ Աղաջանյան*

Լիբանանի շուրջ վերջին իրադարձությունները վերստին ի հայտ բերեցին այն իրողությունը, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է պատրաստ լինի հումանիտար ճգնաժամերի դեպքում ապահովել սփյուռքահայերի անվտանգությունն իրենց հայրենիքում: Հողվածում դիտարկվում է «հումանիտար չափման» եզրի նշանակությունը, ինչը չնայած նեղ ընդգրկում ունի, այնուամենայնիվ, տարածվում է իրավական, քաղաքական և սոցիալ-տնտեսական բնույթի հարցերի բավական լայն շրջանակի վրա: Հարցերի այս համախումբը կարող է առնչվել հայկական սփյուռքին՝ թելադրված լինելով Հայաստանի շահերով: Հողվածում դիտարկվում են պատմական հայրենիք հնարավոր հայրենադարձության սոցիալ-իրավական ասպեկտները լիբանանահայության օրինակով, Բարայեի փորձն այս հարցում:

### ***1. Լիբանանից գաղթած հայերի շուրջ ստեղծված իրավիճակի իրավական կողմերը***

2006-ի պատերազմից հետո Լիբանանի հայ քաղաքացիների<sup>1</sup> որոշակի թվի տեղափոխման հետ կապված հումանիտար իրավիճակն ունի ոչ ավանդական միջազգային իրավական տարրեր: Այս անձանց մասին խոսվում է իբրև փախստականների: Միննույն ժամանակ, եթե հետևելու լինենք փախստականների մասին միջազգային իրավունքի և միջազգային հումանիտար իրավունքի դրույթներին, ապա այս անձինք «չեն համապատասխանում միջազգային իրավունքի հիմնական փաստաթղթերում նշված փախստականի կարգավիճակին»: Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիայի համաձայն՝ այդ կարգավիճակը տրվում է այն անձանց, ովքեր, «ելնելով միանգամայն հիմնավորված երկյուղներից, թե կարող են դառնալ հալածանքների գոհ ռասայական, կրոնական, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքա-

<sup>1</sup> Ոչ պաշտոնական տվյալներով՝ Լիբանանում ապրող հայերի թիվը ներկայումս չի գերազանցում 40-50 հազարը:

կան համոզմունքների համար, գտնվում են իրենց քաղաքացիական պատկանելության երկրից դուրս և չեն կարող օգտվել այդ երկրի պաշտպանությունից կամ չեն ցանկանում օգտվել այդ պաշտպանությունից նման երկրողների արդյունքում» (հոդված 1): Ակնհայտ է, որ Լիբանանի հայ քաղաքացիները թողնում են երկիրը ոչ ըստ այն հալածանքների, որոնց մասին խոսվում է 1951թ. կոնվենցիայում:

Ի տարբերություն փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիայի, միջազգային հումանիտար իրավունքի փաստաթղթերը փախստականների պաշտպանությունը չեն պայմանավորում նրանց կարգավիճակի իրավաբանական սահմանմամբ: Անկախ այն բանից, թե ինչի արդյունքում է տեղափոխված անձը լքել մշտական բնակության վայրը՝ հալածանք, զինված հակամարտություն, թե անկարգություններ, նա օգտվում է պաշտպանությունից իբրև *քաղաքացիական անձ, որը տուժել է ռազմական գործողություններից*<sup>1</sup> լինեն դրանք միջազգային կամ ներքին զինված հակամարտություններ [1, c. 175]: Սակայն «պետության քաղաքացիները, ովքեր փախչելով զինված հակամարտությունից՝ հայտնվում են մի պետության տարածքում, որը չի մասնակցում միջազգային հակամարտությանը, չեն օգտվում միջազգային հումանիտար իրավունքի պաշտպանությունից», և այդպիսով «հաճախ ստեղծվում է մի իրադրություն, երբ փախստականները չեն օգտվում հումանիտար իրավունքի հովանավորությունից: Դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ ապաստան տվող երկիրը չի մասնակցում միջազգային զինված հակամարտությանն ու ներքին հակամարտության ասպարեզ չի հանդիսանում» [2, c. 202]:

Լիբանանից հեռացած և հիմնականում իրենց էթնիկական պատկանելության երկրներ տեղափոխված անձանց կարգավիճակին ավելի համարժեք է ընդունող պետության կողմից «Ժամանակավոր ապաստանի հատկացման» եզրը: Տարածքային ապաստանի մասին 1967թ. հռչակագրի համաձայն՝ «Ապաստանը, որ որևէ պետության կողմից... տրվում է այն անձանց, ովքեր հիմքեր ունեն հղում կատարելու Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 14-րդ հոդվածին<sup>1</sup>, ... պետք է հարգվի մյուս բոլոր պետությունների կողմից: Ապաստան տրամադրելու հիմնավորումների գնահատականը պետք է տա ապաստան հատկացնող պետությունը» (հոդված 1): Ուստի «Ժամանակավորապես պաշտպանվող անձի» կարգավիճակը, որի մասին խոսվում է Հայաստանի Հանրապետություն Լիբա-

<sup>1</sup> «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի հալածանքներից ապաստան փնտրել այլ երկրներում և օգտվել այդ ապաստանից» (Մարդու իրավունքների 1948թ. համընդհանուր հռչակագիր, հոդված 14):

նանի հայ քաղաքացիների տեղափոխման հետ կապված<sup>1</sup>, միանգամայն համապատասխանում է ինչպես միջազգային իրավունքի դրույթներին և ՀՀ ներպետական օրենսդրությանը, այնպես էլ այն իրադրությանը, որն արտահայտվում է «Ժամանակավոր» և «պաշտպանվող» եզրերով:

Հայաստանի տարածքում ապաստան գտած Լիբանանի հայ քաղաքացիների իրավիճակը սահմանվում է 1994թ. «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավիճակի մասին» ՀՀ օրենքի նորմերով: Այս օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ սահմանվում է Հայաստանում օտարերկրյա քաղաքացիների բնակության չորս տեսակ, որոնցից մեկը՝ «Ժամանակավոր բնակության» տեսակը, վերաբերում է հենց լիբանանահայերի իրավիճակին: Օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված են պայմաններ անձին ժամանակավոր բնակության իրավունք տալու մասին, և նման պայմաններից մեկը անձի կողմից ապաստան որոնելն է՝ ի հետևանք իր քաղաքացիական պատկանելության երկրի քաղաքական իրավիճակի անկայունության (հոդված 19, մաս 2): Ընդ որում՝ Հայաստանի գործադիր իշխանության ներքին գործերի ոլորտի կենտրոնական մարմինը (ՀՀ ոստիկանությունը) կարող է սահմանափակել ժամանակավոր բնակության իրավունք ստացած անձանց՝ Հայաստանում ազատ տեղաշարժվելու իրավունքը: Սրան զուգահեռ, օրենքի 19-րդ հոդվածում ընդգծվում է նաև, որ «այդ անձինք ազատվում են մուտքի վիզայի համար վճարից»: Ժամանակավոր բնակության իրավունքը տրվում է մինչև մեկ տարի ժամկետով, որը յուրաքանչյուր անգամ կարող է երկարացվել ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով:

Մեր կարծիքով՝ օրենքում հիշատակվող «բնակության հատուկ իրավունքը» նույնպես շատ սերտ հարաբերակցվում է պատմական հայրենիք լիբանանահայերի տեղափոխման իրավիճակի հետ և, որ առանձնապես կարևոր է, նախատեսում է այն անձանց ավելի մեծ իրավական և սոցիալ-տնտեսական հաստատումը, ովքեր պոտենցիալ հնարավորություն ունեն ստանալու բնակության տվյալ տեսակի իրավունքը: Այս նկատառումը հենվում է օրենքի 21-րդ հոդվածի հետևյալ նորմերի վրա. «բնակության հատուկ իրավունք տրվում է հայկական ծագմամբ օտարերկրյա քաղաքացիներին», «բնակության հատուկ իրավունք կարող է տրվել նաև օտարերկրյա քաղաքացիներին, ովքեր Հայաստանի Հանրապետությունում իրականաց-

<sup>1</sup> 2006-ի օգոստոսի սկզբին Լիբանանից տեղափոխվող հայ քաղաքացիների թվի որոշակի սահմանափակում նկատվեց: Հուլիսի 21-ին երկու հատուկ չվերթով Հալեպից Երևան եկան 220 հայեր՝ Հայաստանի և Լիբանանի քաղաքացիներ: Մինչ այդ, Լիբանանում մարտական գործողությունների ընթացքում Հայաստան է հասցվել ընդհանուր առմամբ գրեթե 400 մարդ: Հուլիսի 28-ի տվյալներով Լիբանանից տարհանվել է 550, Իսրայելից՝ 54 մարդ: Օգոստոսի 1-ի դրությամբ տեղափոխված մարդկանց թիվը հասել է 778-ի: Օգոստոսի 3-ի տվյալներով՝ «Ժամանակավոր պաշտպանվող անձի» (Ժամանակավոր բնակություն) կարգավիճակ ստանալու հայտարարություն է տվել ընդամենը 81 մարդ, բայց արդեն օգոստոսի 7-ի տվյալներով՝ դիմողների թիվը հասել 136-ի (*PanARMENIAN.net*):

նում են տնտեսական, մշակութային գործունեություն», «բնակության հատուկ իրավունքը տրամադրվում է տասնամյա ժամկետով և կարող է տրվել մեկ անգամից ավելի»:

Վերը նշված սերտ փոխկապվածությունը Հայաստանում Լիբանանի քաղաքացիների ներկա դրության և «բնակության ժամանակավոր» ու «հատուկ» իրավունքների տրամադրման օրենսդրական պայմանների միջև առկա է նաև «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավիճակի մասին» ՀՀ օրենքի հաջորդ դրույթներում: Այսպես, օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Ժամանակավոր բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք է ստանում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»: Նա կարող է «ձևակերպել իր ֆինանսական, տնտեսական, առևտրային գործարքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»: Օրենքի 29-րդ հոդվածով նախատեսվում է, որ «բնակության հատուկ իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատանքի իրավունք ունի» և «կարող է զբաղվել ձեռներեցությամբ»: Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում համատեղել ժամանակավոր բնակություն ստացած անձանց իրավունքները բնակության հատուկ իրավունքի կարգավիճակով անձանց իրավունքների հետ, ինչը բխում է հենց օրենքի պայմաններից: Դա կարող է նաև արդյունավետ խթան հանդիսանալ պատմական հայրենիքում էթնիկ հայերի հաստատման և երկրի հասարակական կյանքում ավելի լայն ինտեգրման համար:

Հայաստանի հասարակական հարաբերությունների համակարգում այս անձանց ինտեգրման օպտիմալ կազմակերպչաիրավական ապահովման հետագա որոնումը կարող է կատարվել երկքաղաքացիության սկզբունքի օրենսդրական ձևակերպման և «Հայրենակիցների հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի հնարավոր ընդունման հիմքի վրա:

Իրավական հարթությունում հիմնախնդրի էական հարցերից մեկը «Ժամանակավոր պաշտպանվող անձի» կարգավիճակ ունեցողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու հնարավորությունն է, ինչը հրատապ է դարձնում Հայաստանում երկքաղաքացիության ինստիտուտի օրենսդրական ընդունման կարևորությունը:

Մեր կարծիքով՝ հարցը միանգամայն լուծելի է մարդու իրավունքների միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի հիման վրա և ժողովրդավարական երկրների ներպետական սահմանադրական մեխանիզմների փորձի հաշվառմամբ: Նշենք միայն, որ օպտիմալ մոդելի որոնումը, որը հաշվի կառներ ինչպես հայ սփյուռքի ակնկալիքները, այնպես էլ Հայաստա-

նի Հանրապետության ներպետական դաշտի հասարակական-քաղաքական նրբերանգները, պետք է բխի առաջին հերթին ինչ-որ սուբսիդիար ընդհանուր սկզբունքից, երբ առաջին հայացքից հակասական թվացող մոտեցումներն անհրաժեշտ է տեղափոխել միմյանց փոխընդհանուր և մեկը մյուսից փոխադարձաբար բխող մոտեցումների դաշտ: Այսպես, օրինակ, Հայաստանում ժամանակավոր բնակության տրամադրման սկզբունքի համատեղումը՝ հետագայում հնարավոր երկքաղաքացիություն ունեցողների համար, «ընտրիչ և ընտրվիչ այնտեղ, որտեղ մշտապես ապրում ես» սկզբունքի հետ հետևողական և կշռադատված իրականացման դեպքում պետք է հանգեցնի դրանից բխող մեկ այլ սկզբունքի հաստատմանը. ժամանակավոր կարգավիճակը տրամադրվում է, որպեսզի երկքաղաքացիության կարգավիճակին հավակնող անձն ինքը որոշի իր մշտական բնակության վայրը: Որոշ երկրներում տվյալ պետության քաղաքացիություն չունեցող անձանց բացառության կարգով ընտրական իրավունքներ տալը իշխանության տեղական մարմինների մակարդակով (տեղական ինքնակառավարման շրջանակներում) հավաստումն է այն բանի, որ կարևոր է հենց թեկուզ մշտական բնակության սկզբունքը կոնկրետ վարչատարածքային միավորի շրջանակներում ընտրական իրավունք ստանալու համար<sup>1</sup>: Մեր կարծիքով երկքաղաքացիության կարգավիճակ ունենալ ցանկացող սփյուռքահայերի մեծամասնության համար Հայաստանում ընտրական իրավունքներ ունենալու կամ չունենալու հարցը սկզբունքային չէ: Նման կարգավիճակ ունենալու համար դիմողների մեծամասնությունը, կարծում ենք, հիմնականում և առաջին հերթին կունենա երկու կարևոր մտադրություն: Առաջին՝ իրենց համար ստեղծել «պետական պաշտպանվածության որոշակի ռեզերվ» քաղաքացիական պատկանելության նոր պետության կողմից՝ հանձին պատմական հայրենիքի, քանի որ նրանք որոշակի երկյուղներ ունեն, որ նրանց նոր քաղաքացիական պատկանելության պետությունները, ներքին և/կամ արտաքին բնույթի այս կամ այն պատճառներով, կարող են զրկվել նրանց՝ իբրև իրենց քաղաքացիների, արդյունավետ պաշտպանելու հնարավորությունից (ցանկությունից): Եվ երկրորդ՝ Հայաստանի հետ փաստորեն իրականացվող տնտեսական և սոցիալական կապերը մոցնել իրավաբանորեն պաշտպանվող դաշտ,

<sup>1</sup> Ընտրական իրավունք ստանալը, օրինակ, Ֆրանսիայում, կախված է բնակության նվազագույն տևողությունից՝ վեց ամիս: Դանիան, Նիդեռլանդները և Շվեդիան օտարերկրյա քաղաքացիներին (ովքեր Եվրամիության քաղաքացիներ չեն) ընտրական իրավունքներ են տրամադրում տեղական մակարդակով: Նման ընտրություններին մասնակցելու պայմաններին, ընդհանուր առմամբ, ավելի հեշտ է համապատասխանել, քան ազգային (համապետական) մակարդակում: Դանիայում և Շվեդիայում տեղական մակարդակում ընտրական իրավունք ստանալու համար անհրաժեշտ է եռամյա բնակության փուլ, Նիդեռլանդներում՝ հնգամյա: Ընդ որում՝ Շվեդիայում և Նիդեռլանդներում անհրաժեշտ է, որ այդ փուլը «չընդմիջվի»: Տե՛ս «Voting rights in local elections» Ազգային փոքրամասնությունների գծով ԵԱՀԿ Գերագույն հանձնակատարի «Integration Policies: Cover note by the OSCE High Commissioner on National Minorities» փաստաթղթում, Hague, 28 June 2006, p. 44 (HCNM.GAL/6/06). ([http://www.osce.org/documents/html/pdftohtml/19961\\_en.pdf.html](http://www.osce.org/documents/html/pdftohtml/19961_en.pdf.html)).

ինչը կարող է առավելագույն մակարդակով ապահովվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացու կարգավիճակ ունենալու դեպքում: Նշենք նաև, որ շահագրգիռ պետություններին հուզող հարցերի շուրջ կարող է լինել փոխըմբռնում:

## **2. Լիբանանից հայ փախստականների շուրջ ստեղծված իրավիճակի սոցիալական և տնտեսական ասպեկտները**

«Ժամանակավոր բնակության իրավունքի» գործողության սահմանափակ ժամկետը (այդ կարգավիճակը տրվում է մեկ տարով) չպետք է խոչընդոտի Հայաստան տեղափոխված քաղաքացիների՝ հնարավոր է լայն ներգրավմանը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում:

Իհարկե, լիբանանահայերի տեղափոխությունը կրում է հարկադրական տեղափոխման խիստ արտահայտված տարրեր, ուստի չունի պատմական հայրենիք հայրենադարձվելու սոցիալական կամ տնտեսական ուղղվածություն: Բոլոր պարագաներում տեղափոխված անձինք պահպանում են Լիբանանի քաղաքացիության կարգավիճակը և բավական հաջող տնտեսական դրությունը քաղաքացիական պատկանելության երկրում:

«Ժամանակավոր պաշտպանվող անձի» կարգավիճակի գործողության ընթացքում տեղափոխված անձինք կարող են ծավալել սոցիալ-տնտեսական և մշակութային արդյունավետ գործունեություն: Ընդ որում՝ կարգավիճակի գործողության մեկամյա ժամկետը չպետք է շփոթեցնի նրանց և կասեցնող գործոն հանդիսանա Հայաստանի հասարակական դաշտում հաստատվելու համար՝ ելնելով թեկուզ այն բանից, որ կարգավիճակի ժամկետը կարող է երկարացվել: Այդ մարդիկ կարող են իրենց տեղը գտնել Հայաստանի սոցիալ-տնտեսական որոշակի դաշտում նախ «Ժամանակավոր պաշտպանվողի» կարգավիճակի շրջանակներում, իսկ այնուհետև՝ նաև ավելի հաստատուն և մշտական հիմքով:

Հայաստանի և Լիբանանի տնտեսությունների ուղղվածությունն ու կառուցվածքը շատ ընդհանրություններ ունեն, ինչը կարող է նպաստել տնտեսական դաշտում լիբանանահայերի արագ ինտեգրմանը: Լիբանանահայերը մեծ հաջողությունների են հասել երկրի մանր և միջին բիզնեսի ոլորտում, ավելին, նրանց կարելի է համարել Լիբանանի տնտեսության այդ հատվածի զարգացման «լոկոմոտիվը», որը խոշոր դեր է խաղացել «մերձավորարևելյան Շվեյցարիայի» տնտեսական կերպի ստեղծման գործում: Լիբանանահայերի փորձն այս ոլորտում հատկապես կարևոր է Հայաստանի համար և կարող է օրգանապես ներառվել տնտեսության զարգացման մեջ:

### 3. Հայրենադարձության Բարայելի փորձը

Հայրենադարձության հարցում տեղին ենք համարում ներկայացնել Բարայելի խիստ հաջողված փորձը: Հրեաների հայրենադարձությունն Բարայել ավելի շատ քաղաքական հարցեր էր/է լուծում: Հայրենադարձության ծրագրերի արդյունավետ պլանավորման և իրականացման քաղաքականությունն ու հայրենադարձների ինտեգրման համակողմանի ապահովման քաղաքականությունը կարևոր տեղ են գրավում հրեական պետության քաղաքական հայեցակարգում: Այս առումով, հայրենադարձության ծրագրերի հայեցակարգային հիմնախնդիրները կարող են օգտակար լինել նաև Հայաստանի համար:

Նշված ոլորտում առկա դժվարությունները հաղթահարելու համար Բարայելի առաջին վարչապետ Դ.Բեն-Գուրիոնը կարևորում էր ներքին ուժի օգտագործումը: Մի առիթով նա նշել է. «Հրեա ժողովուրդը կարող է հույան առաջին հերթին իր վրա դնել և ընդամենը մի փոքր չափով՝ այն բանի վրա, որ աշխարհում ինչ-որ մեկը նույնպես կուզենա հասկանալ նրա խնդիրներն ու նրա նկատմամբ որոշ կարեկցանքով կհամակվի: Նա չպետք է կախված լինի որևէ մեկից և չպետք է հավատա ոչ ոքի, բացի ինքն իրենից» [3, c. 20]:

Դ.Բեն-Գուրիոնի համոզմամբ՝ չպետք է հրեաներին բաժանել հայրենիքում և սփյուռքում ապրողների, ավելին՝ պետք է օգտագործել վերջինիս ռեսուրսը. «Այս երկրի ուժն ու նշանակությունը որոշվում են ոչ միայն այստեղ ապրող մեկ միլիոն հրեաների ազդեցությամբ: Եթե մենք չկարողանանք սրան հավելել ամբողջ հրեական սփյուռքի ազդեցությունը, մենք զրոյի կհանգեցնենք մեր դիվանագիտական ջանքերը: Համաշխարհային հրեությունը չափազանց կարևոր քաղաքական, տնտեսական ու բարոյական գործոն է» [3]:

Այսպիսով, հրեական քաղաքական վերնախավում ձևավորվեց մի պատկերացում, որի համաձայն՝ հրեական սփյուռքին հենվելը պետք է դառնա երկրի արտաքին քաղաքականության համարյա թե կենտրոնական առանցքը: Սակայն սփյուռքի հետ աշխատելուն ուղղված ջանքերն ու միջոցները, միասնության պահպանման ընդհանուր պատմական և համազգային նպատակի պայթույթին զուգահեռ, արդարացվում էին հստակ պետական շահի առկայությամբ: Նախ՝ սփյուռքի հրեա բնակչությունը մի գործոն է, որը կարող է ազդել բնակչության երկրի ազգային իշխանության վրա՝ նրա քաղաքականության այն ուղղություններում, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Բարայելի շահերի հետ: Եվ թեպետ լոբբին՝ որպես ներքին քաղաքականության ազդեցիկ ինստիտուտ, ձևավորվել է հրեական սփյուռքի ոչ բոլոր հատվածներում, այսօր նրանց հենց այդ գործառնությունի վրա արված հաշվարկն էլ էական է համարվում: Երկրորդ՝ հրեական սփյուռքն արտասահմանում բնա-

կանոններն ղիտարկվել և ղիտարկվում է որպես *ալիալի*<sup>1</sup> «ոեզերվուար»: Եվ վերջապես, երրորդ՝ սփյուռքը ղիտվում է որպես հնարավոր ներդրող Իսրայելի տնտեսությունում, որը մասնակցելու է համատեղ ձեռնարկություններում, նպաստելու է իսրայելական ապրանքների ներթափանցմանն արտաքին շուկա, օգնելու է ձևավորել երկրի բիզնես-իմիջը, արդիականացնել տեխնոլոգիաներն ու տնտեսության կազմակերպման մոդելները:

Հրեական սփյուռքի բազմապլան ներուժն ի շահ Իսրայելի օգտագործելու հնարավորության և կարևորության ըմբռնումը հանգեցրեց նրան, որ տարբեր ժամանակափուլերում առաջ են եկել հրեական պետության կառավարման կառույցներում սփյուռքի հրեաներին պաշտոնապես ներգրավելու առաջարկություններ՝ կամ սահմանափակ ընտրական իրավունքի ճանապարհով, կամ պետական մարմիններում ներկայացուցչության միջոցով, կամ էլ երկրի քաղաքական կյանքին կարգավորված մասնակցության որևէ այլ ճանապարհով: Նման գաղափարներից մեկը Համաշխարհային հրեական խորհրդարան ստեղծելն էր, որը կազմված կլիներ հրեական բոլոր համայնքների ներկայացուցիչներից և որի որոշումները հաշվի պետք է առնվեին Իսրայելի արտաքին ու ներքին քաղաքականությունն իրականացնելիս: Սակայն Բեն-Գուրիոնն այստեղ ևս հետևեց պետականակերտման սեփական սկզբունքներին և հրաժարվեց հրեաների անկախ պետության քաղաքական կյանքին այդ երկրի քաղաքացի չհամարվող անձանց մասնակցությունից, քանի որ այդ քայլը որոշ կասկածի տակ կդնէր երկրի պետական ինքնիշխանությունը:

Բացի այդ, այս պլանի իրականացման քիչ հնարավորություններ կային նաև հնարավոր հրեա պատվիրակների առումով: Սփյուռքի հրեաների մեծ մասը հակված էր իրեն համարել այս կամ այն պետության քաղաքացի, որը կամավոր միավորվել էր մի որևէ կազմակերպությունում (համայնքային, կրոնական, ազգային) կամ ստեղծել էր մի ինչ-որ լրացուցիչ կառույց՝ իր իրավունքներն ու ազատություններն ավելի լավ ապահովելու համար: Լրացուցիչ, բայց ոչ իբրև այլընտրանք պաշտոնական պետական կառույցներին և, առավել ևս, նրանց նկատմամբ ոչ հակոտնյա: Այս առումով, Համաշխարհային հրեական խորհրդարանում որպես պատգամավոր մասնակցությունը նրանց պրոբլեմատիկ էր թվում: Երկյուղներ էին արտահայտվում, թե նման ինստիտուտի ստեղծումն անխուսափելիորեն առաջ կբերի հակասեմական տրամադրությունների աճ և երկակի լոյալության մեղադրանքներ: Այսպիսով, թե՛ Իսրայելի պաշտոնական և թե՛ սփյուռքի հրեական առաջնորդների կարծիքները բացասական էին, և Համաշխարհային հրեական խորհրդարանի գաղափարից հրաժարվեցին: Միակ ուղորտը, որտեղ Դ.Բեն-Գուրիոնը հա-

<sup>1</sup> *Ալիա*՝ հրեաների մշտական վերաբնակեցումը (հայրենադարձությունը) Իսրայելում:

մաձայնեց գնալ փոխզիջման և ներգրավել սփյուռքի ներկայացուցիչներին, հրեական ներգաղթի և ներգաղթողների տեղավորումը կազմակերպելու ոլորտն էր: Համապատասխան գործառույթներն ու լիազորությունները բաժանվեցին Համաշխարհային սիոնիստական կազմակերպության (հանձին Հրեական գործակալության) և հենց իսրայելական կառավարության միջև, ինչն ամրագրվեց կազմակերպության նոր կանոնադրությունում (ընդունված 1952թ. նոյեմբերին Կնեսետում), ինչպես նաև 1954թ. հուլիսի 26-ին մի կողմից՝ կառավարության և մյուս կողմից՝ Համաշխարհային սիոնիստական կազմակերպության ու Հրեական գործակալության միջև կնքված հատուկ համաձայնությունում [4, c. 149-150]:

XXդ. 90-ական թթ. Իսրայելում սկսվեց Հրեական գործակալության գործունեության վերակողմնորոշում «պետականակերտումից» դեպի «ազգակերտում»: Դա նշանակում էր Հրեական գործակալության ավելի ակտիվ և բազմապլան դեր սփյուռքում հրեաների հետ աշխատանքում: Այլիան առաջվա պես նշվում էր և նշվում է կազմակերպության գերակայությունների թվում, սակայն սկսեց պարզ դառնալ այն հանգամանքը, որ այլայլ մասին որոշում ընդունելը բարդ գործընթաց է, որը կախված է ներքին և արտաքին բազմաթիվ գործոններից: Հրեական պետության, ուրեմն և Հրեական գործակալության շահերից է բխում, որ այդ որոշումն ընդունվի առավելագույն պատասխանատվությամբ, որ գործընթացը կրի *հայրենադարձության*, այլ ոչ թե սոցիալ-տնտեսական կամ այլ պատճառներով պայմանավորված էմիգրացիայի բնույթ (ընդգծ.՝ *հեղ.*): Ուստի և կազմակերպությունն ավելի մեծ ջանքեր է ուղղում հրեական ազգային ինքնագիտակցության արմատավորմանը ազգային մշակույթին, կրոնին, պատմությանը հաղորդակցվելու, ինչպես նաև Իսրայելի և սփյուռքի միջև ամուր կապեր հաստատելու միջոցով:

### ***Հետևություններ***

Լիբանանահայերի տեղափոխման գլխավոր շարժառիթն ու պատճառը չպաշտպանված լինելու հանգամանքն էր, պետության կողմից նրանց պաշտպանության համար անհրաժեշտ հնարավորությունների և առաջիկայում այդ պաշտպանության նախադրյալների բացակայությունը: Այդ պաշտպանությունը լիբանանյան ճգնաժամի ընթացքում նրանց համար կարող է ապահովել պատմական հայրենիքը, որի կազմակերպչական-իրավական և անմիջապես իրականացվող պետական ծրագրերի արդյունավետությունից է կախված տուժած և տեղափոխված անձանց հետագա կենսագործունեությունը:

Ամենայն հավանականությամբ, մենք գտնվում ենք հարևան մերձա-

վորարևելյան տարածաշրջանում խոշոր տեղաշարժերի նախաշեմին: Մերձավոր Արևելքի խոշոր հայկական համայնքներից մի քանիսն արդեն գտնվում են հումանիտար աղետի մեջ ներքաշված երկրներում (Իրաք<sup>1</sup>, Լիբանան) կամ այն երկրներում, որոնք միանգամայն հավանական է, որ հայտնվեն նման աղետի մեջ, եթե դրանցում պահպանվեն տարածաշրջանում հիմնարար տեղաշարժերին ուղղված ներկայիս միտումները (Սիրիա, Իրան): Անհրաժեշտ է պատրաստվել հնարավոր մարդկային հոսքերի «անվտանգության դեֆիցիտի» վայրերից դեպի «համեմատաբար անվտանգ» տեղեր: Ինչպես ցույց է տվել նախորդ տարիների փորձը, քաղաքացիական պատկանելության պետության շրջանակներում կորցնելով պաշտպանված լինելու զգացողությունը՝ մարդիկ սկզբում փորձում են պաշտպանություն գտնել իրենց էթնիկական պատկանելության պետությունում: Արդեն հետագայում, հանդիպելով պատմական հայրենիքի անպատրաստությանը՝ թեկուզ նվազագույն չափով ապահովելու այն սոցիալական մակարդակը, որ նրանք ունենին այն երկրում, որտեղից տեղափոխվել են, գիտակցելով, որ իրենց ակնկալիքները չափազանցված էին, նրանք փոխում են ապաստանի հետագա որոնումների ուղղությունը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է անել հետևյալ գլխավոր հետևությունը. անհրաժեշտ է խոհեմ պետական քաղաքականություն հումանիտար աղետների ներկայիս և հավանական գոտիներից մեր հայրենակիցների հնարավոր հոսքերին նախապատրաստվելու հարցում: Այդ քաղաքականության գործող կազմակերպչական-իրավական և սոցիալ-տնտեսական հիմունքները պետք է ձևավորվեն արդեն այսօր:

*Մեսյաններ, 2006թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *Фредерик Морис, Жан де Куртен, Действия МККК в интересах беженцев и гражданских перемещённых лиц // Защита лиц и объектов в международном гуманитарном праве. Сборник статей и документов, М., 1999.*
2. *Жан-Филипп Лавуайе, Беженцы и перемещённые лица: международное гуманитарное право и роль МККК // Защита лиц и объектов в международном гуманитарном праве. Сборник статей и документов, М., 1999.*
3. *Ури Бялер, Бен-Гурион и внешнеполитическая ориентация Израиля // Формирование судебной системы и внешнеполитической ориентации Израиля // Курс: Становление израильской демократии: первое десятилетие, Тель-Авив, 2001.*
4. *О.А.Зайцева, Еврейская политика в диаспоре и диаспоральная политика государства Израиль// «Востоковедный сборник», выпуск 5, М., 2003.*

<sup>1</sup> 2005թ. Իրաքից Հայաստան են եկել 450 հայեր: Նրանք բոլորն ստացել են ժամանակավոր բնակության իրավունք մեկ տարի ժամկետով (*Ашот Газазян*, <http://www.dw-world.de/dw> 21.07.2006):

## ГУМАНИТАРНЫЕ КРИЗИСЫ И СОЦИАЛЬНО-ПРАВОВЫЕ АСПЕКТЫ РЕПАТРИАЦИИ

*Михаил Агаджанян*

### Резюме

Гуманитарные параметры вынужденного перемещения части ливанских граждан армянского происхождения в Армению имеют достаточно широкое поле охвата различных аспектов политического, правового, экономического и социо-культурного характера. Само вынужденное перемещение, первую волну которого мы наблюдали в конце июля сего года, по количественным критериям носило достаточно ограниченный характер. Тем не менее, с нашей точки зрения, в данном вопросе важны прежде всего не количественные составляющие процесса переселения, а само качество процесса, которое в самом общем виде можно представить в терминах «дефицита безопасности» для армян в некоторых странах их настоящего проживания. Армяне Ливана всегда были достойными, законопослушными и преданными гражданами своей новой родины, давшей приют их предкам, бежавшим от ужасов Геноцида.

Можно с уверенностью сказать, что Республика Армения абсолютно не заинтересована в эскалации нынешнего этапа ближневосточного конфликта, ибо – наверное, как никакая другая страна в мире – знает цену безопасности и благополучия своих граждан, стабильности общественно-политической внутригосударственной жизни и жизненной необходимости эффективного противостояния возможным агрессивным выпадам извне. Армения лишь желает помочь пострадавшим лицам – своим соотечественникам, и в связи с этим должна быть готовой ко всяким сценариям развития возможных процессов в соседних странах и регионах. Также с уверенностью можно сказать, что все потенциально возможные конфликты вокруг нас так или иначе будут обременены свойствами гуманитарных катастроф, которые с большой вероятностью могут привести к массовым притокам наших соотечественников. Установление продуманных оснований политики репатриации, имеющих непосредственное выражение в действующих организационно-правовых механизмах, особенно актуально в свете затронутых нами в статье вопросов.